ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 փետրվարի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

19
(3228)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՊԱՍՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում «Մարտի 1»-ի քրեական գործի շրջանակում սպասվում են նոր ձերբակալություններ: Մեր աղբյուրները հայտնում են, որ դրանք վերաբերելու են ոստիկանության համակարգի նախկին բարձրաստիճան պաշտոնյաներին, եւ ցանկը միայն երկու անձով չի սահմանափակվելու:

Երեկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանը ՀՀ ԱԺ-ում հայտարարեց «Մարտի 1»-ի գործով նոր ձերբակալությունների մասին: Լրագրողների հետ զրույցում, պատասխանելով հարցին, թե արդյոք բացի Երեւանի քաղաքային վարչության պարեկապահակային գնդի նախկին հրամանատար Ռոբերտ Մելքոնյանից եւ նրա տեղակալ Վալերի Օսիպյանից, որոնք արդեն ներգրավվել են գործում, էլի լինելու են նոր մեղադրյալներ, Նահապետյանը դրական պատասխան էր տվել՝նշելով, որ հանրությունը սահմանված կարգով կտեղեկացվի:

Հիշեցնենք, որ «Մարտի 1»-ի քրեական գործով արդեն մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին ոստիկանապետ Վալերի Օսիպյանին եւ Երեւանի նախկին փոխոստիկանապետ Ռոբերտ Մելքոնյանին: Վերջիններս, իհարկե, առաջադրված մեղադրանքը չեն ընդունում՝ համարելով «շինծու»:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները հայտնում են, որ 2026 թվականի ընտրություններին ընդառաջ՝ ՔՊ-ում արդեն մեկնարկել է ներքին ակտիվ շարժը: ՔՊ նախընտրական ցուցակի շուրջ ներքին քվեարկությունից հետո իշխանական թիմը անցել է հաջորդ փուլին՝ մարզային կառույցների շտապ եւ կոշտ վերակազմակերպմանը: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ երեկ կայացած ՔՊ վարչության նիստում քննարկվել են տարբեր մարզերում ՔՊ խորհրդի ղեկավարների թեկնածությունները: Ըստ նույն աղբյուրների՝ առաջիկա օրերին բոլոր մարզերում նախ կնշանակվեն կուսակցական կառույցների խորհուրդների նախագահները, ինչից հետո կմեկնարկի ՔՊ շտաբների ակտիվ փուլը: Հատկանշական է, որ վարչություն է հրավիրվել Կոտայքի մարզի Բյուրեղավան խոշորացված համայնքի ՔՊ խորհրդի ղեկավարի թեկնածու Վլադիմիր Վարդեւանյանը: Հենց նրան է վստահվել Բյուրեղավանի ՔՊ խորհրդի կառավարումը, ինչը վկայում է, որ իշխանությունը փորձում է տեղերում խաղալ «վստահելի կադրերի» դեմքերով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Համակարգչային տեխնիկայի կիրառմամբ հանցավոր գործունեություն իրականացնող անձինք եւ կազմակերպությունները Քրեական ոստիկանության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության օպերատիվ տեսադաշտում են: Վարչությունում ստացված հերթական օպերատիվ տեղեկությունը մայրաքաղաքի Պարոնյան փողոցի հասցեներից մեկի կիսանկուղային հարկում գործող գրասենյակային նշանակության տարածքում մի խումբ անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ էր: «Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ մի խումբ անձինք, նախնական համաձայնությամբ վարձակալելով Երեւան քաղաքի Պարոնյան փողոցում գտնվող կիսանկուղային գրասենյակային նշանակության տարածքը, այն կահավորել են հատուկ համակարգչային տեխնիկայով եւ դրանցում ներբեռնված հատուկ ծրագրակազմերի կիրառմամբ կատարել նամակագրություն, ինչպես նաեւ հեռախոսազանգեր ունեցել ԱՄՆ-ում բեռնափոխադրման գործընթաց իրականացնող անձանց հետ, որոնց առաջարկել իրականացնել բեռնափոխադրում տարբեր ապրանքների համար: Հիշյալ գործընթացի ընթացքում ենթադրյալ հանցավոր մեխանիզմը կիրառող անձինք իրենց վստահված ուղեբեռը հափշտակել են եւ այն տեղափոխել այլ հասցե, որը հետագայում վաճառվել է տարբեր երկրներում»,- նշել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Քրեական ոստիկանության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հափշտակությունների դեմ պայքարի բաժնի պետ Վաղինակ Մինասյանը:

Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալ Կարեն Հակոբյանը պաշտոնին նշանակվել էր 2023 թվականի մարտի 16-ին: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է նրա՝ 2024 թվականի գույքի եւ եկամուտների հայտարարագիրը, որը համադրության մեջ հարցեր է առաջացնում: 2024 թվականի հայտարարագրում Հակոբյանը նշել է երկու անշարժ գույք. առաջինը՝ Երեւանի Դավթաշեն վարչական շրջանում գտնվող բնակարան՝ ձեռք բերված 2000 թվականին, որը 2024 թվականի օգոստոսի 1-ին վաճառվել է 41,000,000 դրամով: Երկրորդ գույքը գտնվում է Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքում՝ «փաստացի տիրապետվող» բնակարան: Սակայն սեփականության իրավունքի կրողի մասին տվյալ չկա: Այլ կերպ ասած՝ փոխոստիկանապետը բնակվում կամ օգտագործում է գույք, որի իրավական սեփականատերը չէ: Նախկին փոխոստիկանապետ Հակոբյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Ավտոմեքենա նրա անունով գրանցված չէ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ԴԻՄՈՒՄ ՄԻԵԴ

ԻՆՉՊԵՍ Է 1 ՄԼՆ 250 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ ՓՈԽԱՆՑԵԼ

ArmLur.am-ի տաղավարում հյուրընկալել ենք հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանին: Վերջին շրջանում Էդգար Ղազարյանը հայտարարություն էր արել, եւ ահա մոտ օրերս մենք իմացանք իրական վարույթի նախաձեռնության մասին. խոսքը վերաբերում էր ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի կոնկրետ գործողությունների չկատարմանը:

-Պարոն Ղազարյան, կասե՞ք՝ ինչ էր արել ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, որի հետեւանքով Դուք դիմել էիք դատարան, եւ դատարանը որոշում էր կայացրել:

-Ամեն ինչ սկսվել է այն պահից, երբ ես ընդդիմության կողմից առաջադրվել էի որպես մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու, եւ ԱԺ մարդու իրավունքների եւ հանրային հարցերի նիստում, երբ քննարկվում էր իմ թեկնածությունը, երեւի շատերը կհիշեն այդ օրվա միջադեպը՝ ՔՊ-ական առհասարակ պատգամավորների խուլիգանական պահվածքը, անհավասարակշիռ կեցվածքը, այդ ժամանակ իմ հասցեին հնչած սպառնալիքները, վիրավորանքները: Եւ այդտեղ երկու հիմնական դերակատարները՝ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանն էր եւ Ռուստամ Բաքոյանը, որոնք, սպառնալիքներից բացի, իմ հասցեին կոպիտ վիրավորական արտահայտություններ էին հնչեցնում: Բացի դրանից, ես դիմել էի իրավապահ մարմիններին, որպեսզի վարույթ ձեւակերպեն այդ պահին իր հնչեցրած սպառնալիքների համար, ինչը չէր նախաձեռնվել, այդ գործով հիմա կա դիմում ՄԻԵԴ-ում:

-Ինչքա՞ն ժամանակ է, որ դիմել եք ՄԻԵԴ, ի՞նչ ընթացքի մեջ է գտնվում:

-Այնտեղ այդ պրոցեսները երկար է տեւում եւ պետք է համբերատար սպասել: Դրանից բացի, 2 քաղաքացիական հայց էի ներկայացրել դատարաններ՝ Արթուր Հովհաննիսյանի եւ Ռուստամ Բաքոյանի դեմ՝ ինձ վիրավորանքների մասով, որովհետեւ վիրավորանքը քաղաքացիական է: Նշեմ, որ երկու դատերն էլ շահել եմ, իրենք բողոքարկել էին վերաքննիչ, մեկը արդեն վճռաբեկ էր դիմել: Բոլորում պարտվել են, դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ, ու նրանք հրաժարվել են կատարել դատարանի վճիռը:

Նշեմ նաեւ, որ Ռուստամ Բաքոյանը նաեւ փոխհատուցման մասով չէր կատարել. հարկադիր կատարողական ծառայությունը գանձեց 1 միլիոն 250 հազար դրամ՝ ներառյալ դատական ծախսերը եւ պետական տուրքը: Իսկ Արթուր Հովհաննիսյանը կամովին, առանց ԴԱՀԿ-ի միջամտության, փոխհատուցել է գումարը: Բայց ասեմ՝ իմ նպատակը Արթուր Հովհաննիսյանից փող ուզելը չէր, փոխհատուցումը վճռի երկրորդ մասն է, հիմնական պահանջը եւ դատարանի վճիռը վերաբերվում է վիրավորանքի համար ներողություն խնդրելուն, եւ այդ ներողության կոնկրետ տեքստը տեսանյութի ձեւով Ազգային Ժողովի պաշտոնական կայքում տեղադրելուն:

-Դուք նաեւ հանցագործության մասին հաղորդում էիք ներկայացնում պարբերաբար երբ Ազգային Ժողով գալիս էիք հանդիպելու կոնկրետ պատգամավորների հետ, փաստացի Ձեզ հետ որեւէ մեկը չէր հանդիպում, իսկ ի՞նչ ճակատագրի արժանացան այդ հաղորդումները:

-Նշեմ՝ նրանց խտրական վերաբերմունքը միայն ինձ չէր վերաբերվում, իսկ եթե նրանք դա ցուցաբերում են իմ նկատմամբ, կարող են ցուցաբերել նաեւ այլ քաղաքացիների նկատմամբ. քրեական օրենսգիրքը ասում է՝ մարդու նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելը՝ պայմանավորված իր կրոնով, աշխարհայացքով, քաղաքական հայացքներով, հանցագործություն է: Իսկ նրանց Ազգային Ժողովի աշխատակիցը գալիս էր ինձ ասում, որ Ձեզ չի ընդունելու, իսկ ես հարցնում էի՝ միայն ինձ չի ընդունում, թե ընդհանրապես քաղաքացիներին, ինձ պատասխանում էին, որ բոլորին ընդունելու է, միայն ինձ չի ընդունելու: Այդ հաղորդումները ներկայացրել եմ, դրանք գնում հասնում են դատախազությունով մինչեւ Արաբկիր քննչական բաժին: 4 քննիչ ունեմ տեսադաշտումս վիրտուալ, անկախ նրանից, թե ում մոտ է գնացել դիմումը, նրանք որոշում են, որ վարույթ չեն նախաձեռնելու: Ես սահմանված ժամկետում բողոքարկում եմ հսկող դատախազին, նա իմ բողոքները մերժում է, ես դիմում եմ Երեւան քաղաքի առաջին ատյանի դատարան, նշեմ, որ այդտեղ արդեն 14 դատ շահել եմ՝ ՔՊ-ական պատգամավորների հետ կապված: Ընդհանուր այս գործով ովքեր ինձ չեն ընդունել, կան 24-ը:

Իսկ կոնկրետ վարույթ պետք է նախաձեռնվի Ռուբեն Ռուբինյանի, Հակոբ Արշակյանի, Սերգեյ Բագրատյանի եւ այլոց հանդեպ:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՊԵՍԿՈՎԸ «ԸՆԴՈՒՆԵԼ Է» ԽՈՍՔԵՐԸ

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը մեկնաբանել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու այն հայտարարությունը, թե Ռուսաստանը չի հասել հատուկ գործողության նպատակներին: Պեսկովն, ընդհանուր առմամբ, համաձայն է այս դրույթի հետ, բայց ընդգծել է, որ նպատակներից շատերն արդեն իրականացվել են: Այս մասին հաղորդում է «Վեդոմոստի» պարբերականը:

Ուկրաինայում Ռուսաստանի ռազմական գործողությունների գլխավոր նպատակը նա ձեւակերպել է որպես Դոնբասի բնակիչների անվտանգության ապահովում:

«Դրանցից (նպատակներից) շատերին հասել ենք: Գլխավոր նպատակն այն մարդկանց անվտանգության ապահովումն է, որոնք ապրել եւ ապրում են Ուկրաինայի արեւելքում, եւ որոնք իսկապես մահացու վտանգի մեջ են եղել: Եւ դա գլխավորն է,-պարզաբանել է Պեսկովը:- Բայց, այո, նպատակները դեռեւս լիովին չեն իրականացվել, ուստի հատուկ ռազմական գործողությունը շարունակվում է»:

Մամուլի ասուլիսի ժամանակ Կրեմլի ներկայացուցիչը նաեւ հիշեցրել է, որ ռազմական գործողությունը սկսվել է որպես «հակազդեցություն կիեւյան ռեժիմին», բայց հետագայում վերածվել է Մոսկվայի եւ արեւմտյան երկրների միջեւ բախման: Նա նշել է, որ ամենասկզբից Ռուսաստանը հույս է ունեցել հակամարտությունն ավարտել բանակցություններով:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՏԱՐՀԱՆՎԵԼ Է

Ավստրալիայի վարչապետ Էնթոնի Ալբանիզը երեքշաբթի երեկոյան տարհանվել է Կանբերայում գտնվող իր պաշտոնական նստավայրից՝ ռումբի սպառնալիքի պատճառով:

Սպառնալիքը կապված է «Shen Yun» պարային խմբի առաջիկա ներկայացումների հետ, որը սատարում է Չինաստանում արգելված «Falun Gong» շարժմանը: Չինարենով ուղարկված երկու նամակներում սպառնալիք է հնչեցվել վարչապետի հասցեին եւ կեղծ տեղեկություն տարածվել, թե նրա նստավայրում պայթուցիկներ են տեղադրված:

Ավստրալիայի դաշնային ոստիկանությունը հայտնել է, որ իրականացված զննման ընթացքում կասկածելի որեւէ առարկա չի հայտնաբերվել, եւ հանրային անվտանգության սպառնալիք չկա:

Չինաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ դեմ է բռնության ցանկացած դրսեւորման՝ միաժամանակ քննադատելով «Shen Yun» պարային խմբին՝ այն անվանելով «Falun Gong» շարժման քաղաքական գործիք:

Ա. Վ.

ՀԱՅԱՍՏԱՆ–ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐՑԵՐ

Փետրվարի 24-ին Ժնեւում ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի նիստի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ՄԱԿ մարդու իրավունքների բարձր հանձնակատար Վոլկեր Տյուրկի հետ:

Արարատ Միրզոյանը եւ Վոլկեր Տյուրկը մտքեր են փոխանակել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առաջնահերթությունների, մարդու իրավունքների միջազգային համակարգի առջեւ ծառացած արդի մարտահրավերների եւ փոխգործակցության հիմնական ուղղությունների շուրջ:

Նախարար Միրզոյանը ներկայացրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղության հետագա ինստիտուցիոնալիզացման հարցում ՀՀ մոտեցումները: Անդրադարձ է կատարվել խաղաղության շարունակական ամրապնդմանը, վստահության մթնոլորտի խթանմանն ուղղված քայլերին, ինչպես նաեւ հակամարտությունից տուժած բնակչության խնդիրների եւ հումանիտար բնույթի հարցերի հասցեագրմանը:

Հանդիպմանը կարեւորվել է ժողովրդավարական դիմակայունության եւ մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների նկատմամբ վստահության շարունակական ամրապնդման ուղղությամբ ակտիվ փոխգործակցությունը: Անդրադարձ է կատարվել նաեւ ընթացիկ տարում Հայաստանում կայանալիք ՄԱԿ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի շրջանակներում մարդու իրավունքների թեմատիկայի հատկացվող նշանակությանը:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ԿՀՐԱԺԱՐՎԻ

«Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանը պատրաստ է հրաժարվել Ռուսաստանի եւ Կիպրոսի քաղաքացիությունից վարչապետ ընտրվելու դեպքում: Այս մասին այսօր՝ փետրվարի 24-ին, «Ազատությանը» տված հարցազրույցում ասել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Նարեկ Կարապետյանը:

«Այն ժամանակ երբ պրոցեսները կհանգեն վարչապետության, նա լինելու է միայն Հայաստանի քաղաքացի: Պրոցեսները միշտ ավելի շուտ պետք է սկսել, այնտեղ կան տեխնիկական խնդիրներ, երկրների միջեւ բյուրոկրատական հարցեր»,- ասել է Կարապետյանը:

Ճշտող հարցին, թե չեն սպասելու, Կարապետյանը պատասխանել է, որ պրոցեսները պետք է շուտ սկսել, որպեսզի հասնեն ճիշտ ժամանակին:

Հարցին՝ ճիշտ ժամանակը երբ է, Նարեկ Կարապետյանն ասել է. «Ճիշտ ժամանակը, երբ մեր հանրությանը կներկայացնենք Սամվել Կարապետյանին մեր երկրի վարչապետ»:

Հարցին՝ եթե կուսակցությունը չի ստանում մեծամասնության ձայները, Սամվել Կարապետյանը չի՞ հրաժարվում, Նարեկ Կարապետյանն ասաց. «Մենք գնում ենք նրան, որ տեսնում ենք՝ այլընտրանք որպես այդպիսին մեր հասարակության զարգացման համար չկա, ստանանք հասարակության մեծամասնության աջակցությունը: Ոչ թե հաջողության դեպքում, այլ ժամանակ»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆԴԻՊԵԼ Է

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Ժնեւում հանդիպել է Ռուանդայի ԱԳ եւ միջազգային համագործակցության նախարար Օլիվիե Նդուհունգիրեին: Այս մասին հայտնում են Արտաքին գործերի նախարարությունից: Հանդիպմանը կարեւորվել է Հայաստան-Ռուանդա քաղաքական երկխոսության շարունակական զարգացումը, այդ թվում՝ ստորագրված երկկողմ փաստաթղթերի իրականացման եւ ԱԳՆ-ների միջեւ քաղաքական խորհրդակցությունների միջոցով: Արարատ Միրզոյանը եւ Օլիվիե Նդուհունգիրեն քննարկել են Հայաստանի եւ Ռուանդայի միջեւ երկկողմ համագործակցությունն ընդլայնելու հնարավորությունները փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունն ու բարձր տեխնոլոգիաները: Բազմակողմ հարթակներում փոխգործակցության համատեքստում առանձնանշվել են Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հարթակի ներուժը եւ ՄԱԿ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը: Զրուցակիցները մտքեր են փոխանակել խաղաղության ամրապնդմանն ուղղված ջանքերի շուրջ:

ԿԱՅԱՑԵԼ Է

Ժնեւում ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի 61-րդ նստաշրջանի շրջանակներում Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանը փետրվարի 24-ին հանդիպել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Էլնուր Մամադովի հետ: Այս մասին հայտնել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Հանդիպումը կայացել է՝ ի շարունակություն քաղաքական բարձր մակարդակով տեղի ունեցած շփումների: Զրուցակիցները քննարկել են բազմակողմ հարթակներում եւ միջազգային կազմակերպությունների շրջանակներում վստահության ամրապնդմանն ուղղված հնարավոր միջոցները:

ԸՆԴՈՒՆԵԼ Է

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանն ընդունել է Միգրացիայի միջազգային կազմակերպության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Արթուր Էրկենին: Այս մասին հայտնում են ՀՀ ԱԳ նախարարությունից՝ ներկայացնելով հանդիպման մանրամասները: Նշվում է, որ Վահան Կոստանյանը բարձր է գնահատել ՄՄԿ-ի հետ համագործակցությունը Երեւանում գրասենյակի հիմնումից ի վեր՝ կարեւորելով հատկապես ՄՄԿ-ի դերը Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց խնդիրները հասցեագրելու հարցում:

ԱԳՆ-ից փոխանցում են, որ Վահան Կոստանյանը ներկայացրել է փախստականների ինտեգրման ուղղությամբ իրականացվող քայլերը՝ այդ թվում անդրադառնալով նաեւ «Փախստականներին եւ հյուրընկալող համայնքներին աջակցության ներառական ազգային շրջանակ» փաստաթղթին, որն ուրվագծում է այս ուղղությամբ առաջիկա երեք տարիներին ՀՀ կառավարության ռազմավարությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ բնակարանային ապահովման եւ զբաղվածության ապահովման ծրագրերին:

ՆԱՎԹԱՅԻՆ ՎԵՃ

ԿԴԱԴԱՐԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիցոն հայտարարել էր, որ Սլովակիայի էլեկտրացանցի օդերևույթը երկուշաբթի օրվանից մերժելու է Ուկրաինայից ստացվող արտակարգ էլեկտրաէներգիայի մատակարարման բոլոր դիմումները, մինչեւ վերականգնվեն նավթի հոսքերը «Դրուժբա» խողովակաշարով: Հավելենք, որ այս հայտարարությունը լարում է հում նավթի մատակարարման շուրջ ծագած վեճը:

Հայտարարությունը հնչել է Բրյուսելում եվրոպացի նախարարների հանդիպումից ժամեր անց, որտեղ փորձ էր արվել համոզել Սլովակիային եւ նրա հարեւան Հունգարիային հետ կանգնել Ուկրաինային պատժելու սպառնալիքներից՝ նավթի մատակարարման ուշացումների պատճառով:

Ռուսական նավթի մատակարարումները Սլովակիա եւ Հունգարիա դադարեցվել են հունվարի 27-ից, երբ Ուկրաինան հայտնել էր, որ արեւմտյան Ուկրաինայում ռուսական անօդաչուի հարվածը վնասել է խողովակաշարի սարքավորումները: Կիեւը հայտարարել էր, որ հնարավորինս արագ վերականգնում է վնասված հատվածը:

Սլովակիան եւ Հունգարիան, որոնք ՆԱՏՕ-ի անդամներ են եւ ունեն Եվրամիության միակ երկու նավթավերամշակման գործարանները, որոնք շարունակում են կախված մնալ «Դրուժբա» խողովակաշարով մատակարարվող նավթից, մեղադրում են Ուկրաինային՝ մատակարարումների երկարատեւ դադարեցման համար:

Սա համարվում է Ուկրաինայի եւ նրա երկու հարեւանների միջեւ առաջացած ամենալարված վեճերից մեկը:

«Այսօրվանից, եթե ուկրաինական կողմը դիմի Սլովակիային՝ ուկրաինական էներգետիկ ցանցը կայունացնելու հարցում աջակցություն ստանալու համար, այդպիսի աջակցություն չի ստանա»,- նշել է Ֆիցոն: Նրա խոսքով՝ որոշումը կչեղարկվի նավթի տարանցման վերականգնումից հետո: Ֆիցոն ընդգծել է, որ սա «փոխադարձ առաջին քայլն» է, որը Սլովակիայի կառավարությունը կարող է ձեռնարկել՝ չխախտելով միջազգային որեւէ պարտավորություն:

Վարչապետը նաեւ զգուշացրել է, որ եթե Ուկրաինան շարունակի վնասել Սլովակիայի շահերը ռազմավարական հումքի մատակարարման հարցում, Բրատիսլավան կարող է վերանայել իր նախկին կառուցողական դիրքորոշումը Ուկրաինայի՝ Եվրամիությանն անդամակցության հարցում եւ պատրաստել լրացուցիչ միջոցառումներ:

Կիեւում գործող ExPro խորհրդատվական ընկերության տվյալներով՝ այս ամսվա ընթացքում Հունգարիան եւ Սլովակիան ապահովել են Ուկրաինայի ներմուծվող էլեկտրաէներգիայի 68 տոկոսը: Սակայն պարզ չէ՝ արդյոք այդ ցուցանիշը ներառում է նաեւ արտակարգ մատակարարումները:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

150 ԻՆՔՆԱԹԻՌ Է ՄՈՏԵՑՐԵԼ

Ամերիկայի Միացյալ Նահանգների զինված ուժերը մեծացրել է ներկայությունը Իրանի մերձակայքում: Այս մասին գրում է The Washington Post-ը՝ հղում անելով արբանյակային լուսանկարներին:

Պարբերականը նշում է, որ ավելի քան 150 ռազմական ինքնաթիռ է տեղափոխվել Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի բազաներ այն բանից հետո, երբ փետրվարի 17-ին Ժնեւում ավարտվել է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ միջուկային բանակցությունների երկրորդ փուլը:

ԱՄՆ-ի եւ Իրանի պատվիրակությունները հանդիպել են փետրվարի 17-ին Ժնեւում, որտեղ երկու կողմերն էլ հայտարարել են, որ առաջընթաց է գրանցվել: Նախագահ Թրամփը փետրվարի 20-ին՝ տարածաշրջանում ռազմական մեծ կուտակումների ֆոնին, հայտարարել է, որ քննարկում է Իրանի վրա սահմանափակ ռազմական հարված հասցնելու հարցը՝ նախազգուշացնելով, որ Թեհրանը մի քանի օր ունի իր միջուկային ծրագրի շուրջ համաձայնության հասնելու համար:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

Կանադան հակառուսական պատժամիջոցների ցանկում ներառել է ավելի քան 50 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց: Ինչպես հայտնում է ՌԻԱ Նովոստին, այս մասին նշել է Կանադայի արտաքին գործերի նախարար Անիտա Անանդը:

«Այսօր ես հայտարարում եմ ռուսաստանյան ֆիզիկական անձանց եւ կազմակերպությունների նկատմամբ սահմանված ավելի քան 4000 պատժամիջոցներն ընդլայնելու մասին: Մասնավորապես, խոսքը նոր 51 պատժամիջոցի մասին է, այս ցանկում մեծ մասը էներգետիկ ոլորտի ներկայացուցիչներ են»,- ասել է Անանդը: Արտաքին գործերի նախարարը նշել է, որ այս քայլով պաշտոնական Օտավան սատարում է Կիեւին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանն ընդունել է Ղազախստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Բոլատ Իմանբաեւին: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են Շրջակա միջավայրի նախարարությունից:

Ողջունելով դեսպանին՝նախարարը կարեւորել է Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունների եւ փոխվստահության վրա հիմնված գործակցության շարունակական զարգացումը՝ ընդգծելով երկկողմ օրակարգի ընդլայնման եւ ոլորտային գործընկերության խորացման պատրաստակամությունը:

Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել Երեւանում նախատեսվող COP17 համաժողովի նախապատրաստական աշխատանքների շուրջ՝ ընդգծելով Ղազախստանի Հանրապետության բարձր մակարդակով մասնակցության կարեւորությունը եւ այդ ուղղությամբ շարունակական համակարգված գործակցության անհրաժեշտությունը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ջրային ոլորտի կառավարման հիմնախնդիրներին: Քննարկվել են ջրային ռեսուրսների կայուն կառավարման, ինչպես նաեւ ՄԱԿ-ի համապատասխան ջրային կոնվենցիաների շրջանակներում իրականացվող գործողությունների սիներգիային ուղղված մոտեցումները՝ հաշվի առնելով գլոբալ բնապահպանական օրակարգի ներկայիս առաջնահերթությունները: Դեսպանը ներկայացրել է Ղազախստանի կողմից նախաձեռնվող Միջազգային ջրային կազմակերպության հիմնադրման գաղափարը՝ անդրադառնալով նախաձեռնության նպատակներին եւ ակնկալվող գործառույթներին: Քննարկվել են նաեւ դրա շրջանակում հնարավոր գործակցության հեռանկարները, ներառյալ փորձի փոխանակման, համատեղ ծրագրերի մշակման եւ կարողությունների զարգացման ուղղությունները: Նախարարը ներկայացրել է Հայաստանի մոտեցումները ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում, ինչպես նաեւ Սեւանա լճի էկոհամակարգի եւ կենսաբազմազանության պահպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ շեշտադրելով դրանց նշանակությունը թե՛ բնապահպանական, թե՛ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման տեսանկյունից:

Անդրադարձ է կատարվել նաեւ առաջիկա միջազգային համաժողովներին ու հարթակներին, որոնց շրջանակում հնարավոր կլինի շարունակել երկխոսությունը եւ վերահաստատել գործակցության առաջնահերթությունները:

ՈՒՇԱՑԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

ՈՎ Է ՄԱՀԱՑԱԾ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

ArmLur.am-ը գրել էր, որ մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ կալանավոր է մահացել: Վերջինս 43-ամյա Տավրոս Ալբերտի Ոսկանյան է, որը ունեցել է այնպիսի առողջական խնդիրներ, որոնք կալանքի հետ անհամատեղելի են եղել:

ArmLur.am-ը դիմել էր Քրեակատարողական ծառայություն, որտեղից ՔԾ հանրային կապերի բաժնի պետ Նոնա Նավիկյանը հայտնել էր. «ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող, 1982թ. ծնված, կալանավորված անձի ինքնազգացողության վատթարացման պատճառով 29.01.2026թ. կանչվել է շտապօգնություն, որը վերջինիս տեղափոխել է քաղաքացիական բժշկական կենտրոն: 04.02.2026թ. կալանավորված անձը տեղափոխվել է պալիատիվ բուժօգնության կենտրոն: 17.02.2026թ. կենտրոնում գրանցվել է կալանավորված անձի կենսաբանական մահը»:

Եւ այսպես, ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել կալանավորի մահվան դեպքից: 2025 թվականի հուլիսի 7-ին դատարան է մուտք եղել Տավրոս Ալբերտի Ոսկանյանի վերաբերյալ քրեական գործը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, բնակարան ապօրինի մուտք գործելով, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2025 թվականի մարտի 24-ին՝ առավոտյան ժամը 08-ից 09-ն ընկած ժամանակահատվածում, պատուհանը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացելու եղանակով ապօրինի մուտք է գործել Անահիտ Կոնստանտինի Ներսեսյանին պատկանող Երեւան քաղաքի Նալբանդյան 47-րդ շենքի թիվ 3 բնակարան եւ ննջասենյակից գաղտնի հափշտակել է վերջինիս պատկանող արծաթյա զարդերը եւ 65.000 ՀՀ դրամ գումարը՝ Անահիտ Ներսեսյանին պատճառելով ընդհանուր 2.000.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Ուսումնասիրելով նրա նկատմամբ հարուցված քրեական վարույթը՝ տեղեկանում ենք, որ մեղադրյալ Տավրոս Ոսկանյանը դատարան մի քանի անգամ դիմում է ներկայացրել եւ տեղեկացրել, որ առողջական խնդիրների պատճառով չի կարող ներկայանալ սույն դատական նիստին: Ավելին, 2025 թվականի հոկտեմբերին դատավոր Արտակ Կարապետյանը քրեական գործով մեղադրյալ Տավրոս Ալբերտի Ոսկանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքի ժամկետը երկարաձգել է երեք ամիս ժամկետով՝ մինչեւ 2026 թվականի փետրվարի 3-ը ներառյալ: Մեղադրյալ Տավրոս Ալբերտի Ոսկանյանի եւ պաշտպան Էդիկ Աղաբեկյանի միջնորդությունները՝ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու վերաբերյալ, մերժվել էին: Մեղադրյալը պարբերաբար պնդել է, որ գլխուղեղի քաղցկեղ ունի եւ սպասում է բժիշկների եզրակացությանը, սակայն դատարանը, մեղադրող դատախազը պահանջել են ապացույցներ:

Արդյունքում, մինչ մեղադրյալ Տավրոսը ապացույցներ կներկայացներ, 2026 թվականի հունվարի 7-ին գործարար Սամվել Կարապետյանին կալանքի տարած դատավոր Արտակ Կարապետյանը վճիռ է կայացրել Տավրոս Ալբերտի Ոսկանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-րդ, 2-րդ եւ 3-րդ մասերի, ինչպես նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ եւ 8-րդ մասերի կիրառմամբ Տավրոս Ալբերտի Ոսկանյանի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկումը՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս ժամկետով, որը նա պետք է կրի ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մեղադրող դատախազը եղել է Վ. Մարգարյանը: Վճիռ կայացնելուց հետո պաշտպանական կողմը ստացել է բժիշկների եզրակացությունը, որ մեղադրյալը քաղցկեղ ունի, պաշտպանական կողմը դիմել է դատարան, որ կալանքը փոխարինեն այլ խափանման միջոցով, սակայն դատարանից պատճառաբանել են, որ վճիռը արդեն կայացրել են եւ այլ բան չեն կարող անել:

Արդյունքում, մեղադրյալ Տավրոս Ոսկանյանի պաշտպանները փետրվարի 16-ին դիմել են ՀՀ վերաքննիչ դատարան, փետրվարի 17-ին ՀՀ վերաքննիչ դատարանում գործը մակագրվել է դատավորներ Մակար Կիրակոսյանին, Լուսինե Ալավերդյանին, Սեւակ Համբարձումյանին, եւ հենց այդ օրն էլ կալանավորը մահացել է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ



Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին պատկանող գույքերի առնչությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներով՝ նախկին նախարարին պատկանող եւ ապօրինի ծագում ունեցող գույքեր էին դիտվել նաեւ նրա կնոջ՝ Ռ.Խ.-ի քրոջ աղջկա՝ Ա.Բ.-ի անվամբ գրանցված՝ Երեւան քաղաքի Նալբանդյան փողոցում գտնվող երկու անշարժ գույքերը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից ներկայացված դիմումների հիման վրա Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 10-ի եւ 23-ի որոշումներով վերոնշյալ երկու անշարժ գույքերի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցներ էին կիրառվել՝ արգելելով Ա.Բ.-ին որեւէ գործողություն կատարել դրանց տնօրինման հետ կապված: Դատարանի որոշումների հիման վրա՝ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում նշված գույքերի նկատմամբ կիրառվել էին օտարման սահմանափակումներ, որի վերաբերյալ որոշումը հանձնվել էր Ա.Բ.-ին:

Վարչության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփման վերաբերյալ կազմված եզրակացության հիման վրա՝ 2022 թվականի ապրիլի 27-ին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում էր ներկայացվել Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան՝ պահանջելով հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել Ա.Բ.-ի անվամբ գրանցված, սակայն փաստացի ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին պատկանող վերոնշյալ անշարժ գույքերի՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող մասերը:

2026 թվականի փետրվարի 3-ին հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Ռ.Խ.-ի նկատմամբ:

ՉԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Ավանի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, փետրվարի 20-ի գիշերը՝ ժամը 1-ի սահմաններում, Ազատամարտիկների փողոցի հասցեներից մեկի մոտ հայտնաբերել, ապօրինի զենք-զինամթերք պահելու եւ կրելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ «Մերսեդես» մակնիշի մեքենայով հանդերձ՝ բաժին են տեղափոխել 34-ամյա վարորդին եւ 25-ամյա ուղեւորին:

Բացատրական աշխատանքի արդյունքում 34-ամյա երիտասարդը մեքենայի խցիկից ոստիկաններին է ներկայացրել լիցքավորված «Մակարով» տիպի ատրճանակ:

Երիտասարդները կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են նախաքննական մարմին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անձի հետախուզման բաժնի եւ Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում փետրվարի 20-ին վարչություն է ներկայացել 51-ամյա մի տղամարդ: Նա փետրվարի 13-ից հետախուզվում էր ավազակության նախապատրաստության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք:

***

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փետրվարի 20-ին Երեւան քաղաքի Նանսենի անվան զբոսայգում հայտնաբերել եւ վարչություն են տեղափոխել Երեւանի բնակիչ 33-ամյա մի երիտասարդի, որը հետախուզվում էր թմրամիջոց իրացնելու մեղադրանքով. խափանման միջոցը՝ բացակայելու արգելք:

***

Համայնքային ոստիկանության Սիսիանի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փետրվարի 20-ին Սիսիան քաղաքի Սյունիքի 1-ին փողոցում հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տարել 46-ամյա մի տղամարդու: Նա հետախուզվում էր երթեւեկության անվտանգության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք:

***

Փետրվարի 21-ին Բագրատաշենի սահմանային անցակետում հայտնաբերվել, ձերբակալվել եւ Համայնքային ոստիկանության Նոյեմբերյանի բաժին է տեղափոխվել օտարերկրյա քաղաքացի 40-ամյա մի տղամարդ: Նա 2025 թ. հուլիսի 1-ից Չինաստանի Ժողովրդական Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվում էր ապօրինի միգրացիայի կազմակերպման մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք:

ԶԵՆՔ–ԶԻՆԱՄԹԵՐՔ

Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները փետրվարի 20-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Կարբի գյուղի 46-ամյա բնակիչը ապօրինի զենք-զինամթերք է պահում: Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին, որտեղ բացատրական աշխատանքի արդյունքում հայտնել է, որ տեղեկությունը հավաստի է: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 46-ամյա տղամարդու տան բակում եւ նկուղում հայտնաբերվել են 12 մմ տրամաչափի որսորդական ողորկափող հրացան, 7,62 մմ տրամաչափի ինքնաձիգ եւ 377 փամփուշտ: 46-ամյա տղամարդը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին: Կատարվում է նախաքննություն:

Հիշեցնենք, որ այն դեպքերում, երբ ապօրինի պահվող զենք-զինամթերքը իրավապահներն են հայտնաբերում, քրեական պատասխանատվությունն անխուսափելի է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում անցած շաբաթ՝ փետրվարի 19-ից 20-ը, հայտնաբերվել է 7 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 1-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ

Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի, մայթերի կառուցապատման գրեթե 900 միլիոն դրամ արժեքով սուբվենցիոն ծրագրի նախագծով նախատեսված շատ աշխատանքներ չեն իրականացվել, կատարված գործերն էլ նախագծից շեղումներով են արվել: Ծրագրի իրականացումից առաջ Դիլիջանի համայնքապետարանը պարտավոր էր այդ ծրագրի տվյալներով տեղեկատվական վահանակ տեղադրել այդ փողոցում, սակայն չի արել: Հունվարի 29-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին. «Որքա՞ն է Դիլիջանի Գետափնյա փողոցի կառուցապատման, ասֆալտապատման, փողոցի հարակից մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքը, ե՞րբ է ծրագրի սկիզբը, ե՞րբ է այն ավարտվելու, ծրագրի նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ որքա՞ն տարբերություններ կան»: Համայնքի ղեկավարը մինչ օրս չի պատասխանել հարցմանը: Անձնական գործում իր սեռի վերաբերյալ գրառման մեջ «արու» գրած, ՔՊ-ական Դավիթ Սարգսյանը նախկինում էլ չի պատասխանել տեղեկատվական հարցումներիս, երեւի իրեն բարձր դասելով Գուցե ՔՊ-ական համայնքապետը հարցումիս չի պատասխանել նաեւ այն պատճառով, որ իր պատասխանով պետք է ակամա ընդուներ Գետափնյա փողոցի ծրագիրը մեծ խախտումներով իրականացնելու, դրա ուշացման մեջ ծրագրի պատվիրատու Դիլիջանի համայնքապետարանի, նաեւ իր՝ համայնքի ղեկավարի մեղքը:

Փետրվարի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշի մարզպետի աշխատակազմում հաճա՞խ եք քննարկում մարզում սուբվենցիոն ծրագրերի ընթացքը, ժամկետները: Դիլիջան համայնքի ղեկավար Դ. Սարգսյանին հունվարի 29-ին տեղեկատվական հարցում եմ արել, սակայն համայնքապետը, խախտելով ՀՀ սահմանադրությունը եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, չի պատասխանել հարցմանս: Խնդրում եմ, որ Դուք պատասխանեք այդ հարցերին»: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատում եւ մայթերի վերանորոգում սուբվենցիոն ծրագիրը ՀՀ համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել այն պայմանով, որ նախատեսված աշխատանքների 50 տոկոսի մեկնարկը կտրվի 2024 թվականին, մյուս 50 տոկոսինը՝ 2025 թվականին: ՀՀ կառավարության 12.02.2026թ. թիվ 142-Ա որոշման համաձայն՝ նշված ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2027թ. հունիսի 30-ը»:

Մարզպետ Հ. Ղալումյանը չի պատասխանել այն հարցերիս, թե որքան է Դիլիջանի Գետափնյա փողոցի ասֆալտապատման, մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքը, երբ է եղել ծրագրի սկիզբը, ծրագրի նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ որքան տարբերություններ կան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Ռուսաստանի Արտաքին հետախուզության ծառայությունը (Foreign Intelligence Service of Russia) երեքշաբթի հայտարարել է, թե Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան ակտիվորեն աշխատում են Կիեւին միջուկային ռումբ տրամադրելու ուղղությամբ:

Հայտարարության մեջ նշվում է, որ Լոնդոնն ու Փարիզը կարծում են՝ միջուկային զենքի առկայությունը Ուկրաինային թույլ կտա ավելի շահավետ պայմաններով ավարտել հակամարտությունը:

«Կարծիք կա, որ Ուկրաինային անհրաժեշտ է մատակարարել «հրաշագործ զենք»: Կիեւը կկարողանա ավելի նպաստավոր պայմաններ առաջադրել ռազմական գործողությունների ավարտի համար, եթե ունենա ատոմային ռումբ կամ առնվազն այսպես կոչված «կեղտոտ» ռումբ»,- նշված է հայտարարությունում:

ՌԴ Արտաքին հետախուզության ծառայության տվյալներով՝ ներկայում Լոնդոնն ու Փարիզը քննարկում են նման զենքի եւ դրա կրիչների տրամադրման հարցերը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է եվրոպական բաղադրիչների, սարքավորումների եւ տեխնոլոգիաների գաղտնի փոխանցմանը Ուկրաինային: Որպես տարբերակ նշվում է ֆրանսիական TN75 կոմպակտ մարտագլխիկը, որը նախատեսված է M51.1 սուզանավային բալիստիկ հրթիռի համար:

Ծառայությունը պնդում է, որ նման ծրագրերը կոպտորեն խախտում են Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրը (Treaty on the Non-Proliferation of Nuclear Weapons) եւ վտանգում են գլոբալ չտարածման ռեժիմը:

Հայտարարության մեջ նաեւ նշվում է, թե Արեւմուտքի հիմնական ջանքերը միտված են այնպիսի պատկեր ստեղծելուն, որ Ուկրաինայում միջուկային զենքի ի հայտ գալը ներկայացվի որպես հենց ուկրաինացիների սեփական զարգացում:

Ռուսական կողմը մեղադրել է Փարիզին եւ Լոնդոնին «իրականության զգացումը կորցնելու» մեջ եւ հայտարարել, որ նրանք «չեն խուսափի պատասխանատվությունից»:

Միաժամանակ, Ռուսաստանի Դաշնության խորհրդի վերին պալատը կոչ է արել Լոնդոնի եւ Փարիզի օրենսդիրներին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին ուսումնասիրել Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կողմից Կիեւին միջուկային պայթուցիկ սարքեր մատակարարելու հնարավոր մտադրությունը:

ՄՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՅԹԵՑՄԱՆ ՓՈՐՁ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ կան տեղեկություններ, որ փորձ է արվել պայթեցնել սեւծովյան «Թուրքական հոսք» եւ «Կապույտ հոսք» գազատարները: Այս մասին հաղորդում է «Ինտերֆաքս» գործակալությունը:

«Խոսքը Սեւ ծովի հատակով անցնող մեր գազային համակարգերի՝ այսպես կոչված «Թուրքական հոսքի» եւ «Կապույտ հոսքի» հնարավոր պայթեցման մասին է: Ոչ մի կերպ չեն կարողանում հանդարտվել»,-ասել է Պուտինը Անվտանգության դաշնային ծառայության խորհրդի նիստում:

«Նրանք չգիտեն, թե ինչ անեն, որպեսզի խաթարեն այս խաղաղության գործընթացը, որում փորձ է արվում կարգավորման հասնել դիվանագիտական միջոցներով: Նրանք անում են ամեն բան, որպեսզի ինչ-որ սադրանք կատարեն եւ խաթարեն այն ամենը, ինչը, զգուշորեն կասեմ, ձեռք է բերվել այս բանակցություններում»,-նշել է նա:

ՌԴ նախագահն ընդգծել է, որ հակառակորդները չեն կարողացել ռազմավարական պարտության մատնել Ռուսաստանին:

«Դա պարզապես չի հաջողվում, բայց նրանք շատ են ցանկանում.... անպայման հաղթել Ռուսաստանին, եւ նրանք փնտրում են ցանկացած ճանապարհ.... Նրանք իրենց կհասցնեն ինչ-որ ծայրահեղության, իսկ հետո կզղջան դրա համար»,-ասել է Ռուսաստանի նախագահը:

«ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՄԻ Է ՓՉՈՒՄ»

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Անկարայում անցկացված կառավարության նիստից հետո հայտարարել է, որ «այժմ ամբողջ աշխարհում «թուրքական քամի» է փչում», հաղորդում է Anadolu-ն:

«Մարդիկ հետաքրքրվում են, թե ինչ է մտածում Թուրքիան, ինչ է անում, ինչ դիրքորոշում ունի նոր զարգացումների նկատմամբ եւ ինչ քայլեր կձեռնարկի»,- ասել է Էրդողանը: Նա խոսել է նաեւ վերջին միջազգային բանակցությունների մասին:

«Փետրվարի 11-ին մենք հյուրընկալեցինք Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսին: Բանակցությունների ընթացքում քննարկեցինք մեր երկրների միջեւ հարաբերությունները, ինչպես նաեւ մեր դիրքորոշումները Եգեյան եւ Միջերկրական ծովերի հարցերի վերաբերյալ: Մեր ստորագրած փաստաթղթերով ամրապնդեցինք մեր հարաբերությունների պայմանագրային հիմքը: Ես վարչապետի հետ խոսեցի Արեւմտյան Թրակիայի թուրքական փոքրամասնության կրթական եւ կրոնական իրավունքների լիարժեք իրականացման վերաբերյալ մեր սպասումների մասին: Մենք նպատակ ունենք Հունաստանի հետ երկկողմ առեւտուրը, որը նախորդ տարի հասել էր մոտ 7 միլիարդ դոլարի, հասցնել 10 միլիարդ դոլարի»,- հայտարարել է Թուրքիայի նախագահը:

Հիշեցնելով Սերբիայի նախագահ Ալեքսանդր Վուչիչի փետրվարի 12-ին Անկարա կատարած այցը՝ Էրդողանն ասել է. «Մեր հանդիպման ժամանակ ես ու Վուչիչը քննարկեցինք մեր ընդհանուր օրակարգի բոլոր հարցերը, ներառյալ՝ Սանջակ շրջանը: Փոխադարձ առեւտուրը հասել է 3,5 միլիարդ դոլարի, իսկ Սերբիայում թուրքական ընկերությունների թիվը գերազանցել է 1500-ը: Հուսով ենք Սերբիայի հետ տարբեր ոլորտներում ավելի խորացնել մեր հարաբերությունները, մասնավորապես քաղաքացիական ավիացիայի, մշակույթի, կրթության, էներգետիկայի, տրանսպորտի եւ զբոսաշրջության ոլորտներում»:

Թուրքիայի նախագահը գովաբանել է նաեւ երկրի զինված ուժերը: «ՆԱՏՕ-ի ամենամեծ եւ ամենաընդգրկուն զորավարժություններից մեկը՝ «Steadfast»-ը, կրկին աշխարհին ցույց տվեց Թուրքիայի զինված ուժերի ձեռք բերած մակարդակը»,- նշել է նա:

● *Փետրվարի 19-ից 20-ը, ըստ ոստիկանության տվյալների, հանրապետությունում հայտնաբերվել է թմրանյութի 16 դեպք:*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ, հայտնում է ՀՀ ՊՆ-ն:

«Նախարար Պապիկյանն Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանին է փոխանցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ջերմ ողջույնը:

Հանդիպման ընթացքում կողմերն ընդգծել են Հայաստանի եւ Իրանի միջեւ բարձր մակարդակի հարաբերությունների շարունակական զարգացման, ինչպես նաեւ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ամրապնդման կարեւորությունն ու անհրաժեշտությունը:

Քննարկվել են Հայաստան-Իրան համագործակցությանը, այդ թվում՝ պաշտպանության ոլորտում փոխգործակցությանը վերաբերող հարցեր:

Նախարար Պապիկյանն ընդգծել է Իրանի շուրջ ստեղծված իրավիճակի՝ դիվանագիտական ճանապարհով լուծման անհրաժեշտությունը:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել նաեւ միջազգային եւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցերի վերաբերյալ»,-ասված է հաղորդագրության մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

Ռուսաստանում ահաբեկչությանը նպաստելու մեղադրանքով քրեական գործ է հարուցվել Պավել Դուրովի նկատմամբ: Այս մասին հայտնում են ռուսական պետական լրատվամիջոցները՝ հղում անելով Ռուսաստանի Դաշնության Արտաքին հետախուզության ծառայությանը (FSB):

Ըստ հրապարակումների՝ Դուրովը մեղադրվում է ահաբեկչական գործունեությանը նպաստելու, ինչպես նաեւ ռուսական կարգավորող մարմնի՝ Ռոսկոմնադզորի ավելի քան 150 հազար պահանջներին չարձագանքելու մեջ՝ անօրինական բովանդակությունը հեռացնելու վերաբերյալ:

ՌԴ ԱԴԾ-ն պնդում է, որ 2022 թվականից ի վեր Telegram-ը օգտագործվել է ավելի քան 153 հազար հանցագործության համար, այդ թվում՝ ահաբեկչության եւ ծայրահեղականության հետ կապված դեպքերում:

Այս ֆոնին՝ Ռուսաստանում ուժեղացվել են Telegram-ի նկատմամբ սահմանափակումները. հավելվածի զանգերի գործառույթը սահմանափակվել է, իսկ փետրվարից դանդաղեցվել է դրա աշխատանքը մի շարք շրջաններում: Դուրովը հայտարարել է, որ ճնշումները միտված են քաղաքացիներին պետական աջակցությամբ ստեղծված Max մեսենջերին անցնելու պարտադրելուն:

Հիշեցնենք, որ Ռուսաստանը նախկինում եւս փորձել էր արգելափակել Telegram-ը, սակայն 2020 թվականին սահմանափակումները հանվել էին:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

ԳԼՈԲԲԻՆԳԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ

Գլոբբինգ օնլայն գնումների միջազգային հարթակը դարձավ ոլորտի առաջին ընկերությունը, որի պարտատոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայում:

Ընկերությունը թողարկել է 1,5 մլրդ ՀՀ դրամ եւ 2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսեր, որոնք հաջողությամբ տեղաբաշխվել են Կոնվերս Բանկի միջոցով:

Պարտատոմսերի շուրջ 90%-ը տեղաբաշխվել է ֆիզիկական անձ ներդրողների շրջանում՝ գերազանցապես Converse Mobile հավելվածի միջոցով: Ընդհանուր առմամբ, ներդրողների թիվը գերազանցել է 500-ը:

Ցուցակման խորհրդանշական զանգը հնչեց փետրվարի 24-ին, իսկ փետրվարի 27-ից ներդրողները հնարավորություն կունենան մասնակցելու Գլոբբինգի պարտատոմսերի բորսայական առեւտրին:

Կոնվերս Բանկը՝ ՀՀ կապիտալի շուկայի ակտիվ մասնակից

Կապիտալի շուկայի զարգացումը Կոնվերս Բանկի ռազմավարական առաջնահերթություններից է: Բանկը տարբեր ոլորտների ընկերություններին աջակցում է պարտատոմսերի թողարկման եւ տեղաբաշխման ողջ գործընթացում՝ սկսած բիզնես ընթացակարգերի համապատասխանեցումից մինչեւ թողարկման կազմակերպում, տեղաբաշխում եւ շուկայի ստեղծում:

Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանը նշում է. «Բանկը հետեւողական քայլեր է ձեռնարկում կապիտալի շուկայի զարգացման ուղղությամբ եւ արդեն ունի հաջողված համագործակցության փորձառություն տնտեսության տարբեր ոլորտների ընկերությունների հետ: Հայաստանում առողջապահության եւ օնլայն առեւտրի ոլորտի առաջին ընկերությունների պարտատոմսերի տեղաբաշխումներն իրականացվել են հենց Կոնվերս Բանկի միջոցով: Մենք շարունակելու ենք աջակցել նման նախաձեռնություններին՝ բիզնեսին տրամադրելով ֆինանսների ներգրավման նոր, այլընտրանքային հնարավորություններ, իսկ ներդրողներին՝ ներդրումային նոր գործիքներ»:

Գլոբբինգի զարգացման նոր փուլը

Պարտատոմսերի տեղաբաշխմամբ Գլոբբինգի համար մեկնարկեց զարգացման նոր փուլ:

«Գլոբալ Շիփփինգ» ՍՊԸ խորհրդի նախագահ եւ Գլոբբինգ ընկերության հիմնադիր տնօրեն Դավիթ Հարությունյանը նշում է. «Պարտատոմսերի տեղաբաշխման ժամկետից շուտ ավարտը մեզ համար դարձավ ներդրողների բարձր վստահության վկայություն: Հատկապես ոգեւորիչ է, որ պարտատոմսերի շուրջ 90 տոկոսը ձեռք են բերել ֆիզիկական անձինք, ինչը բացառիկ բարձր ցուցանիշ է ներդրումային ոլորտում: Եւ մեկ կարեւոր հանգամանք՝ ակտիվ ներդրում են կատարել նաեւ Գլոբբինգի հաճախորդներ: Ներգրավված միջոցները կուղղվեն Հայաստանում եւ Ղազախստանում լոքերների ցանցի ու ինովացիոն սպասարկման սրահների ընդլայնմանը, նոր ծառայությունների ներդրմանը, վերաֆինանսավորմանը եւ թվային լուծումների կիրառմանը»:

Օրինակելի նախադեպ շուկայի համար

Հայաստանի ֆոնդային բորսայի գլխավոր տնօրեն Հայկ Եգանյանն ասում է. «Օնլայն առեւտրի ոլորտի առաջատար ընկերության մուտքը կապիտալի շուկա կարեւոր ազդակ է մասնավոր հատվածի զարգացման եւ Հայաստանի ներդրումային միջավայրի խորացման համար: Նման ընկերությունների ակտիվացումը ձեւավորում է նոր վստահություն եւ կարող է դառնալ օրինակելի նախադեպ արագ աճող այլ բիզնեսների համար՝ պարտատոմսային ֆինանսավորումը դիտարկելու որպես կայուն եւ մրցունակ այլընտրանք»:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԲԱՆԿԵՐ

ԹԱՓԱՆՑԻԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ակբա բանկի խումբը կառավարման արդյունավետության, թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման նպատակով շարունակում է կորպորատիվ կառավարման մշակույթի լայնածավալ բարեփոխումները: Արդյունքում Ակբա բանկի խմբում ներդրվել են առանցքային ներքին ակտեր.

- Համապատասխանության քաղաքականությունը,
- Էթիկայի եւ Վարքագծի կանոնագրքերը,
- Շահերի բախման կառավարման քաղաքականությունը,
- Ազդարարման քաղաքականությունը:

Թափանցիկ կառավարման ամրապնդման նպատակով Ակբա բանկի խումբը ներդրել է ազդարարման նոր հարթակ, որը հասանելի է խմբի բոլոր շահակիցների համար եւ սպասարկվում է եվրոպական անկախ մատակարար Whispli ընկերության կողմից:

Whispli-ն կազմակերպություններին հնարավորություն է տալիս ստեղծել ապահով եւ էթիկական աշխատանքային միջավայր՝ ազդարարողներին տրամադրելով լիակատար անանունության հնարավորություն:

Հարթակը անկախ է եւ ինտեգրված չէ Ակբա բանկի խմբի ներքին համակարգերին, ինչը լրացուցիչ երաշխիք է ազդարարողների գաղտնիության պաշտպանության համար: Հարթակը հասանելի է բանկի պաշտոնական կայքէջից՝ «Ազդարարել» կոճակի միջոցով:

Բացի առցանց հարթակից՝ գործում է նաեւ ազդարարման թեժ գիծ՝ +374 33 35 35 71: Ձայնային հաղորդագրությունների միջոցով ազդարարման դեպքում կիրառվում է ձայնի ավտոմատ փոփոխություն՝ նույնականացումը բացառելու նպատակով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՑՈՒՑԱԿՎԵԼ ԵՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ

Յունիբանկի անժամկետ պարտատոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել հասցեական առեւտուր եւ կնքել ռեպո գործարքներ: Բանկը թողարկել էր 6,5 մլրդ ՀՀ դրամ եւ

9 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով երեք տրանշ:

Դրամային թողարկումների արժեկտրոնային եկամտաբերությունն առաջին երեք տարվա համար կազմում է 13.75%, որից հետո այն կհաշվարկվի պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հիման վրա: Դոլարային պարտատոմսերի եկամտաբերությունը սահմանվել է 8.3%, իսկ առաջին երեք տարիներից հետո այն կհաշվարկվի SOFR տոկոսադրույքի հիման վրա:

Յունիբանկն առաջինն էր Հայաստանում, որ թողարկեց անժամկետ պարտատոմսեր: Նոր գործիքի թողարկումը նշանակալի իրադարձություն էր արժեթղթերի հայաստանյան շուկայի համար: Անժամկետ պարտատոմսերը հնարավորություն են տալիս երկարաժամկետ հեռանկարում ստանալ կանոնավոր եկամուտ:

Հատկանշական է, որ պարտատոմսերի ամբողջ ծավալը տեղաբաշխվեց հաշված օրերի ընթացքում, ինչը եւս մեկ անգամ հաստատում է առաջարկի գրավչությունը եւ ներդրողների բարձր վստահությունը Յունիբանկի նկատմամբ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՖՐԱՆՑԻՍԿՈՍԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ ԱՂՈԹԵԼ

Սուրբ Ֆրանցիսկոս Ասիզացու մահվան 800-ամյակի կաղակցությամբ հավատացյալները կկարողանան աղոթել նրա մասունքների առջեւ՝ Սան Ֆրանչեսկոյի Սուրբ բազիլիկին նվիրված ստորին եկեղեցում: Սպասվում է, որ մեկ ամսվա ընթացքում քաղաք կայցելի 370 հազար ուխտավոր: Սուրբ Ֆրանցիսկոս Ասիզիի մահվան 800-ամյակի կաղակցությամբ Ումբրիայի շրջանը դասրասվում է մի իրադարձության, որը, ինչպես սպասվում է, հարյուր հազարավոր ուխտավորներ կբերի ամբողջ աշխարհից:



Փետրվարի 22-ից մարտի 22-ը սրբի մասունքները հանդիսավոր կերպով կցուցադրվեն Ասիզիի Սան Ֆրանչեսկո բազիլիկի ստորին եկեղեցում հարգանքի տուրք մատուցելու համար: Իշխանությունների գնահատականներով՝ ամսվա ընթացքում Ասիզի կայցելի մոտ 370 հազար մարդ ՝ օրական միջինը մինչեւ 18 հազար: Քաղաքի եւ շրջակայքի հյուրանոցներում եւ ռեստորաններում տեղերն արդեն գրեթե վաճառված են: Ինչպես հաղորդում է Vatican News-ը, յուրաքանչյուր ուխտավորի մասունքների հասանելիությունը երաշխավորելու համար Ֆրանցիսկյան կուստոդիան նախատեսել է կայքում ձայնագրման համակարգ www.sanfrancescovive.org: Պարտադիր անվճար ամրագրումը թույլ է տալիս ընտրել միջոցառմանը մասնակցելու երկու ձեւ ՝ անհատական կամ խմբով ՝ Ֆրանցիսկյան եղբայրներից մեկի ուղեկցությամբ: Այս դեպքում դուք կարող եք ընտրել այն լեզուն, որով տեղի կունենա համատեղ աղոթքը:

Սակրո Կոնվենտոյի հասարակայնության հետ կապերի վարչության տնօրեն Ֆրա Ջուլիո Չեզարեոն Vatican News-ին տված հարցազրույցում նշել է, որ մասունքների առաջիկա ցուցադրությունը դուրս է բացառապես կրոնական իրադարձության շրջանակներից եւ կոչված է կրկին հիշեցնելու խաղաղության եւ եղբայրության ուղերձը, որը կրում է սրբի հոգեւոր ժառանգությունը: «Ասիզիից աղքատ մարդու» մասունքների հարգանքը, ինչպես հաճախ անվանում են Ֆրանցիսկոսը, ուշադրություն է հրավիրում նրա կյանքի վրա՝ որպես ավետարանին արմատական հետեւելու, ողորմության եւ պարզության օրինակ: Այն, ըստ կազմակերպիչների, նախկինի պես ոգեշնչում է ոչ միայն հավատացյալներին, այլեւ Եկեղեցուց հեռու գտնվող մարդկանց: Սոցիալական եւ քաղաքական ճգնաժամերի պայմաններում սրբի կերպարը կրկին ընկալվում է որպես հույսի խորհրդանիշ եւ հիշեցնում, որ նույնիսկ փոքր անձնական քայլը կարող է փոխել աշխարհը դեպի լավը:

Հոբելյանական միջոցառումները չեն ավարտվի մարտյան ցուցադրությամբ: Տարվա ընթացքում նախատեսված են մի շարք նախաձեռնություններ՝ նվիրված Ֆրանցիսկոսի հոգեւոր եւ մշակութային ժառանգությանը: Ամենասպասված իրադարձություններից է Հռոմի Պապ Լեո XIV-ի այցը Ասիզի օգոստոսի 6-ին՝ «Ֆրանցիսկյան երիտասարդական հանդիպում»: Հռոմի պապը երիտասարդների հետ կհանդիպի Սանտա Մարիա Դելի Անժելի բազիլիկում՝ ընդգծելով կապը ուրախության Ֆրանցիսկյան իդեալի եւ ժամանակակից կյանքում ավետարանին հավատարմության միջեւ: Այցը կդառնա սրբի մասունքների մոտ սկսված աղոթքի ուղու խորհրդանշական շարունակությունը:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿՏԱՎԸ ԿՀԱՆՎԻ ԱՃՈՒՐԴԻ

Իսահակ Լեւիտանի, Իլյա Ռեպինի, Վալենտին Սերովի, Հովհաննես Այվազովսկու, Վիկտոր Վասնեցովի եւ 18-20-րդ դարերի այլ վարպետների աշխատանքները մարտի 1-ին Մոսկվայում կհանվեն աճուրդի՝ 1 միլիարդ ռուբլի ընդհանուր գումարով. այդ մասին ՏԱՍՍ-ին հայտնել են Մոսկվայի աճուրդի տան մամուլի ծառայությունից:

Ամենաթանկ լոտը Հովհաննես Այվազովսկու «Լուսնյակ գիշեր Ղրիմում» բնանկարն է, որը գնահատված է 60 միլիոն ռուբլի:

«Այս անգամ աճուրդը կզարմացնի լոտերի իսկապես բացառիկ ծագմամբ. կատալոգում ներառված են ստեղծագործություններ մասնավոր հավաքածուներից, որոնք ավելի վաղ մասնակցել են Տրետյակովյան պատկերասրահի մակարդակով ցուցահանդեսներին, ինչպես նաեւ գործեր այնպիսի անհատների հավաքածուներից, որոնց անուններն անբաժանելի են Ռուսաստանի պատմությունից…. Մասնագետները հավաքածուի մարգարիտն են համարում Հովհաննես Այվազովսկու 1861 թվականի «Լուսնյակ գիշեր Ղրիմում» բնանկարը: Վարպետի կողմից ստորագրված այս ավելի քան կես մետր չափով կտավի նախնական գնահատումը կազմում է 60 միլիոն ռուբլի», - ասվում է հաղորդագրության մեջ:

Մոսկվայի աճուրդի տան մասնագետները հազվագյուտ են համարում լոտերում ներկայացված Հովհաննես Այվազովսկու «Վլադիմիր շոգենավ ֆրեգատ» գծանկարը (1852): Նկարիչն այդ նավով ճանապարհորդել է Նիկոլայ I կայսեր հետ:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օրեր առաջ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացել է վրացի անվանի դաշնակահար Վալերիան Շիուկաշվիլիի մենահամերգը: Երաժիշտն առաջին անգամ էր ելույթ ունենում Հայաստանում:

Դաշնակահարը երեւանյան հանդիսատեսին ներկայացրել է իր նուրբ երաժշտական մտածողությունը, վիրտուոզ տեխնիկան եւ խորապես լիրիկական մեկնաբանությունները:

Համերգային ծրագիրը ներառում էր երեք մեծ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Նրա յուրօրինակ կատարմամբ երեկոյի ընթացքում հնչել են Դոմենիկո Սկարլատիի սոնատները, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Սոնատ N10» եւ «Դո մաժոր» ստեղծագործությունները, ինչպես նաեւ Ֆրեդերիկ Շոպենի մազուրկաները: Հանդիսատեսի ջերմ ընդունելության եւ երկարատեւ ծափահարությունների ներքո դաշնակահարը կատարեց մի քանի բիս:

Համերգը կազմակերպվել էր «Պարոնյան» ընկերության եւ Կամերային երաժշտության ազգային կենտրոնի նախաձեռնությամբ:

Շիուկաշվիլին վրացի դաշնակահար է, որն առանձնանում է նուրբ երաժշտական մտածողությամբ եւ արտահայտիչ կատարողականությամբ: Նրա մեկնաբանությունները համադրում են դասական դպրոցի հստակությունը եւ զգացմունքային խորությունը՝ ստեղծելով անմիջական կապ հանդիսատեսի հետ: Նա նաեւ «Generalbass» բարոկո երաժշտության միջազգային դաշնամուրային մրցույթի գլխավոր եւ մշտական ժյուրիի անդամ է:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՈՍԱՆ» ՄԵԿՆԵՑ

Ֆուտբոլի Հայաստանի չեմպիոն եւ գավաթակիր «Նոսա» մեկնեց Նիդերլանդներ, որտեղ փետրվարի 26-ին Կոնֆերենցիաների լիգայի անցումային փլեյ-օֆֆի պատասխան խաղում կմրցի հոլանդական «ԱԶ Ալկմարի» հետ:

Անցումային փլեյ-օֆֆի առաջին խաղում Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում փետրվարի 19-ին «Նոսա» 1:0 հաշվով առավելության հասավ «ԱԶ Ալկմարի» նկատմամբ: Հայաստանի չեմպիոնը հաղթանակի հասավ պաշտպան Հովհաննես Համբարձումյանի գեղեցիկ գոլի շնորհիվ:

«Նոայի» հետ մրցավայր է մեկնել նաեւ աշխարհի առաջնության քառակի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի քառակի չեմպիոն Արսեն Հարությունյանը, որը մարզադաշտից կերկրպագի սիրելի թիմին:

Նշենք, որ «ԱԶ Ալկմար» եւ «Նոա» պատասխան հանդիպման հյուրերի սեկտորի տոմսերը սպառվել են: Այդ մասին հայտնել է երեւանյան ակումբը:

ՄԵՐԺԵԼ Է

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» նախկին նախագահ Ժոան Լապորտան հայտարարել է, որ ակումբը երկու տարի առաջ ՊՍԺ-ին մերժել է իսպանացի հարձակվող Լամին Յամալի տրանսֆերի համար 250 միլիոն եվրո առաջարկը: «Դա եղել է երկու տարի առաջ: ՊՍԺ-ն մեզ առաջարկեց 250 միլիոն եվրո Լամին Յամալի համար: Մենք հրաժարվեցինք: Այն ժամանակ նա 17 տարեկան էր: Ոմանք կարծում էին, թե մենք խելագար ենք»,- կատալոնական ակումբի նախկին նախագահի խոսքը փոխանցում է լրագրող Ֆաբրիցիո Ռոմանոն:

Յամալը «Բարսելոնայի» կազմում նորամուտը նշել է 2023-ին, 15 տարեկանում: Ընթացիկ մրցաշրջանում նա անցկացրել է 33 հանդիպում, դարձել 15 գոլի եւ 14 գոլային փոխանցման հեղինակ: Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 200 միլիոն եվրո:

ԳՐԻԶՄԱՆԸ՝ ՄԼՍ–ՈՒՄ

Ֆրանսիայի հավաքականի եւ Մադրիդի «Աթլետիկոյի» ֆրանսիացի հարձակվող Անտուան Գրիզմանը կարիերան կարող է շարունակել ԱՄՆ-ում: 34-ամյա ֆուտբոլիստի ծառայություններով հետաքրքրված է ՄԼՍ-ում հանդես եկող «Օռլանդո Սիթին», այս մասին հայտնում է The Athletic-ը:

Աղբյուրի փոխանցմամբ, ամերիկյան ակումբը մտադիր է առաջիկա օրերին իրականացնել Գրիզմանի տրանսֆերը:

Ընթացիկ մրցաշրջանում Գրիզմանը «Աթլետիկոյի» կազմում անցկացրել է 35 հանդիպում՝ դառնալով 12 գոլի եւ 2 գոլային փոխանցման հեղինակ:

● *Փետրվարի 26-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Առաքել» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են հողամասերի ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքները:

Պետրոս Ստեփանյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու կամ մի քանի անձանց մոտ սեփականության, օգտագործման ներքո գտնվող հողամասը նրանց է պատկանում համապատասխանաբար՝ ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքով: Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը ծագում է երկու կամ մի քանի անձանց սեփականության իրավունքով այն հողամասն անցնելիս, որը չի կարող բաժանվել առանց դրա նպատակային նշանակության փոփոխման կամ օրենքի ուժով ենթակա չէ բաժանման, ինչպես նաեւ սեփականատերերի կողմից իրենց պատկանող հողամասերը կամովին՝ պայմանագրի հիման վրա մեկ հողամասում միավորելիս:

Օրենքներով եւ այլ իրավական ակտերով, հողաշինարարական եւ քաղաքաշինական փաստաթղթերով սահմանվում են հողամասերի նվազագույն չափերը, որոնցից ցածր չի թույլատրվում ընդհանուր սեփականությունից առանձնացնել հողամասեր (ըստ օրենքի՝ անբաժանելի հողամասեր):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սեփականատերերից մեկին պատկանող շենքի, շինության վերակառուցումը չի հանգեցնում ընդհանուր հողամասում նրա բաժնի մեծացմանը՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողների իրավունքները:

Գայանե Սարիբեկյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու եւ նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաեւ նրանց մայրությունը եւ (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները:

Մինչեւ անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի եւ անչափահաս ծնողների միջեւ առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը եւ մայրությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը Armenpress-ից

«Ծիծաղելի մարդու երազը» ներկայացումը Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 1 - 6 + 1 + 6
Կոտայքի լեռներ	- 1 - 5 + 2 + 5
Կոտայքի նախալեռներ	+ 1 + 4 + 8 +12
Գեղարքունիք	0 - 5 + 2 + 6
Լոռի	- 2 + 2 + 2 + 6
Տավուշ	- 1 + 2 + 2 + 6
Արագածոտնի լեռներ	- 2 - 5 + 1 + 4
Արագածոտնի նախալեռներ	0 + 5 + 8 + 12

Արարատ	+ 2 + 6 +10 + 14
Արմավիր	+ 2 + 6 +12 + 15
Վայոց ձորի լեռներ	- 1 - 5 + 2 + 6
Վայոց ձորի նախալեռներ	+ 1 + 5 +12 + 15
Սյունիքի լեռներ	- 2 - 6 + 2 + 5
Սյունիքի նախալեռներ	0 - 5 + 5 + 9
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +11 + 14
Երեւան	+ 3 + 5 + 12 + 14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*